Ես իսկոյն յիշեցի պառաւ Սուսանի մի օր առաջ յայտնուիլը Այգեստանի փողոցներում եւ Հիւբբիի կախարդական գաւազանի մէջ թաքցրած խորհրդաւոր թուղթը:

— Ուրեմն դու ինձանից առաջ գիտէիր, որ մատնուած ես, — ասաց տիկինը, — ուրեմն ես մի մեծ ծառայութիւն չարեցի քեզ, ցոյց տալով փաշայի ստացած նամակը:

— Դու ինձ շատ պարտաւորեցրիր, — պատասխանեց Ասլանը:

Տիկինը ժպտաց:

— Բայց ինձ զարմացնում է, — հարցրեց նա, — թէ ինչպէ՞ս կարող էին քո նամակագրին յայտնի լինել այդ բոլոր մանրամասնութիւնները, որպէս պատմեցիր, — թէ՛ Ֆարհատի եւ Մարօի գիշերային խօսակցութիւնը իրանց վրանի հանդէպ, թէ՛ Խաթունի լսելը եւ նրա խոստովանութիւնը տէր Թոդիկին, թէ՛ այդ քահանայի եւ նրա համախոհների արած մատնութիւնը քուրդ բէկին, եւ այլն:

— Այդ բոլորը յայտնել էր իմ նամակագրին Մարօն, — պատասխանեց Ասլանը: — Երբ տէր Թոդիկը իր մօտ խորհուրդ է կազմում՝ Կարապետ հայր սուրբի, տանուտէր Պետրոսի եւ քուրդ բէկի հետ, նրանց բոլոր խօսակցութիւնը լսում է քահանայի դուստրը, Սօնան, որը մի պատոական աղջիկ է: Նա շտապում է եւ շուտով իմացում է տալիս Մարօին, իսկ Մարօն՝ իմ թղթակցին: — Տեսնո՞ւմ ես, տիկին, դարձեալ կանայք են շինում բանը:

— Իսկ պառաւ Խաթունի խոստովանութիւնը քահանայի՞ն:

— Նա ինքն է պատմում Մարօին, երբ Մարօն հարցնում է նրանից: Ինձ գրել էին, թէ խեղճ պառաւը միշտ լաց է լինում, որ իր խոստովանութիւնը այդպիսի վատ հետեւանք ունեցաւ:

— Մարօ՛ եւ Սօնա, — կրկնեց տիկինը մի առանձին ոգեւորութեամբ, — երկու նորընծայ օրիորդներ, որ պատրաստւում են ծառայել բարի գործին: Ա՛խ, որքան ցանկանում եմ գոնէ մի անգամ տեսնել նրանց:

— Երկուսն էլ շատ սիրուն եւ հարուստ ձիրքերով աղջիկներ են, — ասաց Ասլանը: — Ժամանակով նրանցից լաւ բան կդուրս գա...

Ա՛խ, որքա՜ն քաղցր էր ինձ լսել այսպիսի գովասանքներ թէ՛ Մարօի եւ թէ՛ Սօնայի մասին, երկուսն էլ անմոռանալի յիշատակներով կապուած էին իմ սրտի հետ...

Խօսակցութիւնը կրկին դարձաւ մատնութեան վրայ: Տիկինը հարցրեց.